Եւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ (վէզիրն) մազուլ ա-
բար զՄէհէմէտ քէհեա, որ էր հօրն և իւրն մինչև ցայն
օր և ետուն զԱմիթ նմա յիշխանութիւն, և եդ քէհեա
զոմն Մուհամէտ որ էր զառաջինն մուհա[սէ]պէճի՝ յա-
ւուրն Դշի որ Մայիսի է։ Եւ պատճառ Բ գիտեա այսմ՝
զի ասացին թէ վէզիրն, որ զտէֆտէրտարն առաջին
փոխեաց, վասն որոյ և ղըզլար աղասին՝ ձեռնտուու-
թեամբ վալիտին՝ զիւր արմատն ի նմանէ եհան, և եր-
կրորդ՝ ներագործութիւն ի վէզիրէ ասացին, զի քէհ-
եան անհաւան լինէր գործոյ նորա, վասն որոյ և դըր-
դեալ զարքայ՝ մազուլ արար, և զի լուեալ ասացին ո-
մանք յասելն ոմանց՝ թէ տէվլէթն բանեցնող քէհեան
է թէ՛ ի հօր ժամանակին և թէ իւրն, վասն որոյ ոչ
տարաւ զայս անուն, և զի զարքայ հաւատացուցեալ
էր իւրն առաւել քան զհայր իւր։

Եւ դարձցուք ի մերս թշուառութիւն. զի մունե-
տիկն սկսաւ աղաղակել թէ Ահա՛ եկեղեցիք քեաֆիր-
ան ծախի յարքունուստ, ո՛վ ոք կամի՝ եկեալ առցէ
բազում աւուրբ։ Եւ առաջին քէհեան յանձն առ հա-
նել զբանտարգեալսն, զի յորժամ քակեցին զեկեղե-
ցիսն[1]) ի նոյն աւուրս մանզուլ եղև. զի սուպաշին
առաջին քակէլն՝ զքիրէմիտս աւերեաց, իսկ երկրորդ
անգամ՝ զառաստաղն և զչաթուն և զմիջի սիւնսն ա-
մենայն քակեալ ձեռամբ մէյմարին, կալեալ զճար-
տարս զբազում աւուրս, զի քակէին անողորմաբար
և զամենայն աւար առին և ծախեցին։ Եւ բան և գործ
այս արարեալ էր իւրն անօրէն դուքսն, զի հարց և
փորձ արարեալ և ի քննութիւնս պարապեալ՝ հրաման
առնէ մէյմարին տալ զտուրկէրս ի ձեռս, որք չինողք
են եկեղեցեաց, վասն որոյ և յաւուր Համբարձման
Եւ այգուցն՝ Թ Մայիսի (Ռ-ր.) կալեալ սուպաշուն

1) զեկ՚՚.